

**Եթէ բարեպաշտութիւնդ զուր կը թուի քեզի, կարդա՛ Եփեսացիներուն 5.1-20**

Սատուծոյ նմանեցե՛ք, որպէս իր սիրելի որդիները, եւ սիրով շարժեցե՛ք այնպէս, ինչպէս Քրիստոս մեզ սիրեց եւ մեզ փրկելու համար ինքզինքը Սատուծոյ ընծայեց որպէս անուշահոտ ընծայ եւ գոհ: Պոռնկութեան, որեւէ պղծութեան կամ ագահութեան խօսքն իսկ թող չըլլայ ձեր մէջ, որովհետեւ այդպէս կը վայելէ Սատուծոյ ժողովուրդին: Վայել չէ, որ լկտի եւ ամբարիշտ խօսակցութիւններով կամ խեղկատակութեամբ զբաղիք, այլ՝ ձեր խօսակցութիւնը միշտ գոհաբանութիւն պէտք է ըլլայ: Մէկ բան վստահ գիտցե՛ք, թէ ոեւէ մէկը, որ պոռնկութիւն կ'ընէ, պղծասէր է կամ ագահ, ինչ որ կոպտաշտութիւն է, ժառանգութիւն պիտի չունենայ Քրիստոսի եւ Սատուծոյ արքայութեան մէջ: Հետեւաբար, չըլլայ որ ոեւէ մէկը պարապ խօսքերով ձեզ խաբէ, որովհետեւ այս բաներուն համար Սատուած իր բարկութիւնը պիտի թափէ անհնազանդ մարդոց վրայ: Ասկէ ետք որեւէ յարաբերութիւն մի՛ ունենաք այնպիսիներուն հետ, որովհետեւ թէեւ ժամանակ մը խաւար էիք, սակայն հիմա որ Տիրոջ միացաք՝ լոյս էք: Հետեւաբար, լոյսի որդիներուն վայել ձեռով ապրեցե՛ք, որովհետեւ լոյսին պտուղներն են՝ բարութիւնը, արդարութիւնը եւ նշմարտութիւնը: Ձանացե՛ք հասկնալ, թէ Սատուած ի՛նչ կ'ուզէ ձեզմէ, <sup>11</sup>եւ բնաւ մասնակից մի՛ ըլլաք խաւարին գործերուն, որոնք Սատուծոյ կամեցած պտուղները չեն տար:

Սիրելի ընթերցող, շարունակէ սոյն գրութիւնը, ունենալով Նոր Կտակարանի Եփեսացիներու գիրքը:

**ԴՊԻՐ**

Դպիր կը կոչուին անոնք, որոնք եկեղեցական առաջին չորս աստիճանները ստացած են: Դռնապանութիւն, Ընթերցողութիւն, երգմնեցուցչութիւն, Ջահընկալութիւն:

Դպրութեան վերոյիշեալ չորս աստիճանները մասնաւոր ձեռնադրութեամբ կը շնորհուին այն նուիրեալ տղոց, որոնք յաճախակի իրենց ներկայութեամբ սատար կը հանդիսանան արարողութիւններուն եւ նուիրումով ու ծառայասիրութեամբ կը սպասարկեն եկեղեցոյ: Մոմ կը բռնեն, քչոց կ'ընեն, սողմոս կը կարդան, Ս. Ծննդեան եւ Ս. Յարութեան ճրագալոյցներուն մարգարէական գիրքերու ընթերցումը կը կատարեն:

Իսկ աւագ դպիրներ, որոնք ուրար կրելու իշխանութիւն ստացած են, քարոզներ կը կարդան, բուրվառ կ'ընեն, ճաշու գիրքի ընթերցումը կը կատարեն, կը մասնակցին շարականներու եւ Ս. Պատարագի քառաձայն երգեցողութեան, Ս. Խորանի երգեցողութիւնը կը կատարեն եւ առաջնորդի արտօնութեամբ ճաշու Ս. Աւետարանը կը կարդան: Համեստ բայց մեծ է անոնց ծառայութիւնը Հայոց եկեղեցոյ ծիսակատարութեան մէջ:

Դպիրներու համախմբումը կը կոչուի դպրաց դաս: Իսկ կազմակերպեալ դպրաց դաս մը կ'ունենայ իր տնօրէն խորհուրդը կամ վարչական մարմինը, տնօրինելու համար դպրաց դասի կարիքները, հսկելու դպրաց դասի շարականներու փորձերուն եւ հետեւելու դպիրներուն անթերի եկեղեցի յաճախելուն:

**ՀԱՍՅԷ.**

ՃՐԱԳ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ jcrak ճրագ թերթ



ԺԴ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 16 ՄԱՅԻՍ 2021 ԹԻՒ 20

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ  
Գրծ. 23.12-35: Ա. Յի. 5.13-21  
ՅԻՍՈՒՍ ԶՐԻՍՏՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ 12.12-23

**ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ**

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ Չատկի տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմատենի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «Ովսաննա՛, օրհնեալ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էջ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. «Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Մի՞ոնի՛ աղջիկ, որովհետեւ թագաւորդ քեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ այն ատեն յիշեցին՝ թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին, թէ Յիսուս Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ զայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին թէ ինչպէս ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնե՞ք որ բան մըն ալ չենք կրնար ընել: Ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Սատուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիդա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս եկաւ Անդրեասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»:

**ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ**

**ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԴ**

Երկրորդ Ծաղկազարդի տօնախմբությունը սահմաններ է ներսւէ Շնորհալիի եղբայրը՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը, հիմնուելով Գրիգոր Լուսաւորիչի Խոր Վիրապ գտնուած Ժամանակ պատահած մէկ աւանդական դէպքին վրայ:

Գրիգոր Լուսաւորիչը երբ ինքն Վիրապ կը գտնուէր, անոր կը սպասարկէր հրեշտակ մը: Համբարձման չորրորդ օրը, Կիրակի օր, հրեշտակը չ'երեւնար: Յաջորդ օրը Լուսաւորիչ կը հարցնէ պատճառը եւ կը տեղեկացնէ, որ այդ օրը երկնային քահանայապետութիւնը կը տօնէր Յիսուսի երկինք համբառնալը եւ նոյն օրը չորրորդ դասակարգութեան տօնն էր, որուն ինք կը պատկանէր:

++++  
ԱՂՕԹՔ

Տէ՛ր, վտակներու աղբիւր բխեցո՛ւր գլուխէս եւ ոռոգէ՛ մտքերուս անդաստանը, լուս՛ յանցանքներուս աղտը ու սրբէ՛ վերքերուս թարախը, հանէ՛ մեղքերուս փուշը եւ տնկէ՛ կեանքի բոյսը: Տէ՛ր, աճեցո՛ւր արդարութիւնը եւ նուաստացո՛ւր անօրէնութիւնը, մեռցո՛ւր մարմնի ցանկութիւնը եւ նորոգէ՛ հոգիիս կենդանութիւնը:

ԵՓՐԵՄ ԱՍՈՐԻ

**ՀԱՐՅՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ**

**ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾԻ ՍՏԵՂԾԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՈՐ ԻՆՉ ԲԱՆԻ ԱՐԴԻՒՆԸ Է:**

Աստուած Սէր է (Ա. Յով. 7.8,16) եւ այդ անհուն սիրոյ արտայայտութիւնն է պատճառը իր բոլոր ստեղծագործութիւններուն, նաեւ մարդ արարածին, որուն սիրոյն ու վայելքին համար ստեղծուեցաւ երկիրը իր բոլոր բարիքներով եւ երկինքի մէջ հաստատուեցան արեւը, լուսինն ու աստղերը:

Ինչպէս, որ Աստուծոյ անհուն սիրոյն արտայայտութիւնը պատճառ է մարդ արարածին ստեղծումին եւ անոր շնորհուած բարիքներուն, նոյնպէս ալ մարդ արարածին զաւակներ ունենալու եւ անոնց վայելքները շնորհելու փափաքին պատճառն է ծնողական անհուն սէրը, որ կը բխի իրմէ՝ իր մէջ գոյութիւն ունեցող սէրը Աստուծոյ գոյութենէն:

**ԻՆՉ Է ԿՈՉՈՒՄՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՐԴՈՒՆ:**

Մարդուն կոչումն է գործակցիլ Աստուծոյ՝ երկրի վրայ հաստատելու համար երկինքի թագաւորութիւնը (Ա. Կորթ. 9.9) Իր Արարիչին անհուն սիրոյն եւ շնորհած բարիքներուն փոխարէն մարդուն պարտականութիւնն է բոլոր սիրտով զԱյն սիրել, պաշտել, փառաբանել եւ գոհութիւն յայտնել Անոր:

**Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Պ Ա Տ Գ Ա Մ**

**ԾՆՈՂՆԵՐ ՊԱՐՏԻՆ ԱՂՕԹՈՂ ԲԱՍԿ ԻՐԵՆՑ ԶԱՂՎՄՆԵՐՈՒՄՆ չՈՒՄԸ**

Եւ ըսաւ.- Տէ՛ ը, ողորմէ զաւակիս, լուսնոտ է եւ սաստիկ կը տանջուի. շատ անգամ կրակի մէջ կ'իյնայ եւ երբեմն ալ՝ ջուրի մէջ (Մտթ. 17.15): Չենք գիտեր եթէ երբեք լուսնոտ այս պատանին կարողութիւնը ունէր անձնապէս դիմելու Յիսուսին եւ խօսելու հետը թէ ոչ, բայց մէկ բան յստակ է, որ այս պատանին ունէր գթասիրտ եւ հաւատքով լեցուն հայր մը, որ բնաթոյլ պիտի չտար, որ իր զաւակը մնար իր դժբախտ վիճակին մէջ:

**ՄԵՐ ՍՈՐՎԵԼ ԻՔ Հ Ո Գ Ե Ւ Ո Ր Դ Ա Ս Ը**

Ծնողներ պարտին աղօթել իրենց զաւակներուն համար, իրենց զաւակները այդ մէկը փափաքին թէ ոչ: Ծնողներ կոչուած են իրենց զաւակներուն դատը ներկայացնել աշխարհի Դատաւորին, իրենց զաւակները այդ մէկը կամենան թէ ոչ: Կրնայ ըլլալ, որ լուսնոտը անձնապէս Յիսուսին դիմելու կարելիութիւնը չունէր, ձեւը չէր գիտեր, ըսելիքը չէր գիտեր: Այսօր մեր զաւակներէն շատեր ծանօթ չեն երկինք առաջնորդող Ճամբային Յիսուսի: Ծնողներ պարտին ծանօթացնել անոնց այդ Ճամբան:

**ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒՋԵՍ...**

**ԵԹԷ ԿՈՒՋԵՍ ԳԻՏԵԱԼ ՏԻՐՈՋ ԽՕՍԲԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ, ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՎԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ Կարդա՛ ՍԱՂՄՈՍ 19**

Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ, երկնակամարը անոր արարչութեան կը վկայէ: Իւրաքանչիւր օր նոյն վկայութիւնը կուտայ, ամէն մէկ գիշեր նոյն գիտութիւնը կը յայտնէ: Զկայ որեւէ խօսք, չկայ որեւէ բառ, եւ որեւէ ձայն չի լսուիր անոնցմէ, բայց ամբողջ աշխարհ կը սփռուի անոնց պատգամը, մինչեւ աշխարհի ծայրը կը հասնի անոնց վկայութիւնը: Աստուած երկնքի մէջ բնակարան կանգնեց արեգակին, եւ սա՛ փեսայի մը պէս իր առագաստէն դուրս կուգայ, հսկայի մը պէս ցնծութեամբ իր ճամբան կ'երթայ: Երկինքի մէկ ծայրէն կը ծագի ու մինչեւ միւս ծայրը կը շրջի եւ չկա՛յ բան մը, որ անոր տապէն գերծ մնայ:

**ՏԻՐՈՋ ՕՐԵՆՔԸ**

ՏԻՐՈՋ Օրէնքը կատարեալ է, անձր կը վերանորոգէ:

ՏԻՐՈՋ պատուիրանները վստահելի են, իմաստուն կը դարձնեն պարզամիտները:

ՏԻՐՈՋ հրահանգները ուղիղ են, սիրտը կ'ուրախացնեն:

ՏԻՐՈՋ պատուերները լոյս են, աչքերը կը լուսաւորեն:

ՏԻՐՈՋ վախը սուրբ է, եւ յաւետանջնջելի:

ՏԻՐՈՋ դատաստանները ճշմարիտ են եւ միշտ արդար, աւելի ցանկալի՝ քան ամենէն զուտ ոսկին, աւելի փառք՝ քան մեղրախորիսիէն քամուած մեղրը: